ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Արման Սարգսյան

«02» սեպտեմբեր 2022 թ.

ԵՊՀ առընթեր Ա.Շահինյանի անվան

Ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց

11դ դասարան

Մուրադյան Անահիտ Միքայելի

« 2022 – 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 20 աշակերտից՝ 15 տղա և 5 աղջիկ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ, համերաշխ, բանիմաց, աշխատասեր և հետաքրքրասեր կոլեկտիվ է, կա առողջ մրցակցություն:

2. ՈՒՍՈՒՄԱՆԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ես որպես դասղեկ իմ առջև խնդիր եմ դրել, որ յուրաքանչյուր երեխայի մեջ փնտրել և տեսնել անհատականությունը և այդ անհատի մեջ զարգացնել ամենակարեվորը, որով կարելի լինի մասնակից դարձնել մտավոր, բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղարվեստական դաստիրակությանը: Դաստիարակչական աշխատանքների ընթացքում աշակերտների մեջ մշտապես զարգացնել կազմակերպվածության, հետևողականության, ճշտապահության և աշխատասիրության բնավորության գիծը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Եկեղեցու հետ կապը մեծ դեր ունի երեխայի հայեցի և հոգևոր դաստիարակության գործում: Իզուր չէ, որ դպրոցներում տրվում է «Հայ Եկեղեցու Պատմություն» առարկան: Ճանաչելով և նշելով ազգային տոները, ճանաչելով դրանց իմաստն ու նշանակությունը, այդ ամենի հաղորդակիցը և մասնակիցը դառնալով երեխաներն իրենց զգում են ազգային մշակույթի կրողն ու շարունակողը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Կազմակերպել այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ: Սերմանել սեր գեղեցիկի, երաժշտության, արվեստի, նկարչության նկատմամբ: Ձևավորել գեղագիտական ճաշակ, հարգանք սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և այլնի հանդեպ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Յուրաքանչյուր ոք հայրենասիրությունը հասկանում և մեկնաբանում է յուրովի։ Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը բնութագրվում է հայրենիքի նկատմամբ տածած սիրով, հավատարմության զգացումով, քաղաքացիական պարտքի ձևավորմամբ և պատասխանատվությամբ։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը կարևոր դեր է խաղում անձի ձևավորման գործում։ Ճիշտ է ասված «առողջ մարմնում՝ առողջ հոգի»։ Դրա համար պետք է և պարտադիր է մասնակցությունը ֆիզկուլտուրայի դասերին։ Պետք է կազմակերպել ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ։

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ոչ ոքի, ոչինչ հենց այնպես չի տրվում։ Դրա համար պետք է աշխատասիրություն։ Դա դրսևորվում է դասարանի մաքրության կազմակերպմամբ, դպրոցական առօրյայում ցուցաբերած հոգատարությամբ։ Պետք է ունենալ կյանքում մի նպատակ, որին հասնելու համար նպաստի աշխատասիրությունը։

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Յուրաքանչյուրս մի մասնիկն ենք բնության և աչքի լույսի պես պետք է ճանաչենք և պահպանենք մեր հայրենի բնաշխարհը։ Դրա համար պետք է կազմակերպել նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, արշավներ։Մասնակցել միջոցառումների՝ ծառատունկերի և շաբաթօրյակների։

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Դպրոց-ընտանիք կապը շատ արդյունավետ գործոն է երեխայի ուսման հարցում։ Կապ պաշտպանելով ծնողների հետ, աշակերտին ճիշտ ուղղություն է տրվում առաջադիմության որոշակի խնդիրների լուծման հարցում։ Ծնողական ժողովներին քննարկել դասարանում կատարված դրական ու բացասական գործունեությունները։

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամերը	Կատարողներ
I	Բարի գալուստ նոր 2022-2023 ուսումնական տարի։ Դպրոցի բակում գեղեցիկ միջոցառմամբ շնորհավորում ենք նոր ընդունված աշակերտներին։		աշակերտ դասղեկ
II	STARMUS փառատոնի շրջանակներում ֆիզմաթ դպրոցը հյուրընկալեց Ջորջ Նիլդին։ Մասնակցեցինք դասախոսությանը՝ բացահայտելով տիեզերքի գաղտնիքները։		աշակերտ դասղեկ
III	Դասղեկի ժամ – նոր ուսումնական տարվա պահանջները՝ կարգապահություն, դասացուցակ, հաճախումների պահանջներ, այցեքարտերի պատրաստում և բաշխում, դասագրքերի հետ կապված խնդիրներ։		աշակերտ դասղեկ
IV	Դարաշրջանի մարտահրավեր – անկախ պետականության պահպանման երաշխիքը՝ խաղաղությունն է։		աշակերտ դասղեկ
VI	Տարեցների օր – հարգանք և հոգատարություն		աշակերտ դասղեկ
VII	«Շնորհավոր տոնդ ուսուցի՛չ» Հարգենք և գնահատենք մեր ուսուցիչներին՝ նրանց անմնացորդ նվիրումը։		աշակերտ դասղեկ
VIII	Ծնողական ժողով – ամփոփում ենք առաջին կիսամյակի արդյունքները։		աշակերտ դասղեկ
IX	Արտագաղթը չարիք է։		աշակերտ դասղեկ
X	Օդային տագնապ և պաշտպանության միջոցները։ Դպրոցի տարածքում ապաստարաններից ճիշտ		աշակերտ դասղեկ

	օգտվելու կանոնները։		
XI	Այցելություն թատրոն։		աշակերտ դասղեկ
XIII	Բնական աղետներ։ Սպիտակի երկրաշարժ՝ հիշատակի օր։		աշակերտ դասղեկ
XIV	«Եթե ես ցանկանում եմ, ապա կարող եմ»		աշակերտ դասղեկ
XVI	Անցկացնել ժնողական ժողով։		աշակերտ դասղեկ
XVII	Իմ երկիրը երեկ, այսօր և վաղը։		աշակերտ դասղեկ
XVIII	Հայրենիք, ես զարկն եմ քո բազկի։		աշակերտ դասղեկ
XIX	Բարեգործություն։ Հայ բարեգործները։		աշակերտ դասղեկ
XX	Ինչպես պայքարել անտարբերության դեմ։		աշակերտ դասղեկ
XXI	Զրույց՝ «Ճանաչում ես արդյոք քո երկիրը»՝ ա) խոսում են քարերը՝ եկեղեցիներ, տաճարներ, արձաններ, բ) մեր մայրաքաղաքները գ) ազգային տոներ։		աշակերտ դասղեկ
XXII	Հանդուրժողականություն և հոգատարություն		աշակերտ դասղեկ
XXIII	Այցելություն թանգարան		աշակերտ դասղեկ
XXIV	Շնորհավորանք մեր մայրերին «Մայր իմ սուրբ ու բարի»		աշակերտ դասղեկ
XXV	Խիղճ՝ ամենաանաչառ և խիստ դատավորը բոլորիս համար։		Աշակերտ դասղեկ
XXVI	Ինչ է ընկերությունը։ Կարող եմ արդյոք իմ ընկերոջը սիրել իմ անձի պես։		աշակերտ դասղեկ
XXVII	Ծնողական ժողով գարնանային արձակուրդներից առաջ։		աշակերտ դասղեկ
XXVIII	Մայրության և գեղեցկության տոնը։		աշակերտ դասղեկ
XXIX	Իմ կատարած լավ գործերը։		աշակերտ դասղեկ
XXX	Հիշում և պահանջում եմ		աշակերտ դասղեկ
XXXI	Ինչ եմ ուզում դառնալ։ Բոլոր մասնագիտություններն էլ լավն են և հարգի՝ բանորից մինչև մտավորական։ Կարևորը ես իմ տեղում եմ։		աշակերտ դասղեկ

XXXII	Այցելություն բուսաբանական այգի		աշակերտ դասղեկ
XXXIII	Մայիսյան տոներին ընդառաջ		աշակերտ դասղեկ
XXXIV	2022-2023 ուստարվա ամփոփում		աշակերտ դասղեկ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախոսության, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
	Դարաշրջանի մարտահրավեր	
18.09.2022 թ.	«Իմ երկիրը երեկ, այսօր ը վաղը»	